ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՄԵՐԱԲ ԲԵՐԻՁԵ. «ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԿԵՏԵՐՈՒՄ Է՝ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՂԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ

*Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանը եւ Հայաստանի Գյումրի քաղաքի գիտահետազոտական կենտրոնը ստորագրել են Համագործակցության հուշագիր, որի նպատակն է զարգացնել ու խորացնել վրաց- հայկական գիտական կապերը:*




***Մեր զրուցակիցը Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարանի ռեկտորի տեղակալ, պրոֆեսոր ՄԵՐԱԲ ԲԵՐԻՁԵՆ է:***

- Մեր համալսարանը 32 տարեկան է: Այն գործում է աշխարհագրական երկու կետերում՝ Ախալցիխեում եւ Ախալքալաքիում,- ասում է Մերաբ Բերիձեն:- Ունենք չորս մասնաշենք, 2 հազար ուսանող եւ նրանցից մոտ 25-30 տոկոսը մեր երկրի էթնիկ հայ երիտասարդներն են: Նրանց ուսուցման գործընթացը բավական հետաքրքիր է: Դիմորդները համալսարան ընդունվում են լուրջ մրցույթի հիման վրա, եւ ապա մեկ տարվա ընթացքում սովորում վրաց լեզուն: Բնականաբար, նրանք արդեն դպրոցից գիտեն վրաց լեզուն, սակայն անհրաժեշտ է գրական վրացերենի իմացությունը, որպեսզի դասախոսությունները կարողանան ընկալել այնպես, ինչպես անհրաժեշտ է: Երբ ավարտում են այդ նախապատրաստական փուլը, իրենք են ընտրում, թե ուր են հանձնելու: Ընդունելության քննություն չեն հանձնում: Նախապատրաստական կուրսի քննությունը հանձնում են մայրենի լեզվով:

- Մեր հայ ուսանողները բավական առաջադեմ երիտասարդներ են, լավ են սովորում: Մասնագիտությունների շարքում առանձնապես պահանջված են համակարգչային տեխնոլոգիաները, իրավագիտությունը, էկոնոմիկայի կառավարումը, նաեւ հումանիտար գիտությունները: Ինքս անձամբ ունեմ հայ ուսանողներ, մագիստրոսներ: Նշեմ նաեւ, որ երբ մեր երկրի լիարժեք քաղաքացիները՝ հայ ուսանողները, ավարտում են համալսարանը, նրանք լուրջ հաջողությունների են հասնում աշխատաբաղության տեսանկյունից: Այդ երիտասարդերի 90-95 տոկոսն աշխատանքի է տեղավորվում Ջավախեթիում: Սամցխեում այդ տոկոսը մի փոքր պակաս է, թեեւ, կրկնում եմ, որ զբաղվածության տեսանկյունից մեր շրջանավարտների ճանապարհը հարթ է:

Մենք հումանիտար ուղղություններ ունենք հատկապես վրաց-հայկական հարաբերությունների ոլորտում եւ լեզվական կապերի մակարդակով, ինչպես նաեւ բարբառագիտության հիմնախնդիրների տեսանկյունից: Նշեմ, որ վրացի ուսանողների համեմատ, հայազգի ուսանողներն առավելություն ունեն, քանի որ վրացերենից բացի, տիրապետում են հայերենին, ռուսերենին ու անգլերենին: Վրացի ուսանողները, եթե հայերենը չսովորեն, ապա չեն իմանա այն: Բնականաբար, նրանք էլ կարող են իմանալ ռուսերենն ու անգլերենը, սակայն հայ ուսանողների թվում ռուսերեն իմացողներն ավելի շատ են: Այդ ամենի մասին ես ու համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Մակա Բերիձեն համատեղ զեկույց ներկայացրինք միջազգային խորհրդաժողովին, որն անցկացվեց սեպտեմբերի 23-24-ը Հայաստանի Գյումրի քաղաքի գիտահետազոտական կենտրոնում: Թեման էր «Պետական լեզվի դերն ու գործառույթը Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում»:

Զարմանալի է, բայց Սամցխե-Ջավախեթիում գործող համալսարանը ակտիվ կապեր չուներ Հայաստանի հետ, դա բնականաբար ճիշտ չէր: Այս պահին մեր համալսարանը հուշագրերի մակարդակով հարաբերություններ է հաստատել Գյումրիի գիտահետազոտական կենտրոնի հետ: Հայաստանյան գիտնականներն արդեն այցելել են մեզ, համատեղ ընդհանուր ծրագրեր ենք մշակել: Կապերի ամրապնդման հաջորդ քայլը մեր ներկայացուցչության մասնակցությունն էր վերոնշյալ միջազգային խորհրդաժողովին: Դա 11-րդ միջազգային խորհրդաժողովն էր՝ «Շիրակի պատմական եւ մշակութային ժառանգությունը, հայագիտության արդի հարցերը» խորագրով: Խորհրդաժողովը նվիրված էր Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի կենտրոնի հայագիտության հետազոտությունների 25-ամյա հոբելյանին:

Մեր պատվիրակությունում կազմում երեք հոգի էինք: Ինչպես արդեն նշեցի՝ ես եւ տիկին Մական ունեինք համատեղ զեկույց, մեզ հետ էր նաեւ պրոֆեսոր Ռոին Ղավրելիշվիլին: Վերջինս հանդես եկավ «Հայ-թուրքական պատերազմի լուսաբանումը վրացական մամուլում 1920 թվականի իրադարձությունների վերաբերյալ» զեկույցով: Որքանով տեղեկացված եմ, պարոն Ռոինը բավականին հետաքրքիր ներկայացրեց իր զեկույցը, հնչեցին տարաբնույթ հարցեր, նաեւ իմ զեկույցի վերաբերյալ: Չնայած, մեր երկրները գտնվում են կողք կողքի եւ մեզ ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր է բաժանում, մենք՝ հայերն ու վացիները շատ հարցերում միմյանցից անիրազեկ ենք: Այսօր տեղեկատվությունը գլոբալ բնույթ է կրում: Այժմ հային ու վրացուն շատ են հետաքրքրում սովորական կենցաղային լուրերը, թե ինչպե՞ս են ապրում, ի՞նչ են անում, ի՞նչ հետաքրքրություններ ունեն: Հեռուստացույցից տեղեկանում ես համաշխարհային լուրերին, սակայն այն, ինչ մենք պետք է իմանանք միմյանց մասին, շատ քիչ է: Ցավոք, մեր գրական թարգմանությունները շատ քիչ են: Որքանով տեղեկացված եմ, մեր համալսարանի «Արավի» ամսագրում տպագրվել են հայ հեղինակների շատ քիչ թարգմանություններ:

Գտնում եմ, որ խորհրդաժողովը մեծ անհրաժեշտություն էր, շատ հետաքրքիր՝ մեր պատվիրակության համար: Նոյեմբերի 18-ին մենք անցկացնելու ենք համալսարանական խորհրդաժողով եւ անպայման կհրավիրենք հայաստանյան մեր գործընկերներին: Նրանք կմասնակցեն մեր խորհրդաժողովին, որը նվիրված կլինի օնոմաստիկայի (անվանաբանության) հիմնախնդիրներին:

Միաժամանակ, այսօր բավական մատչելի տարբերակ կա. արտասահմանից ցանկացած գիտնական կարող է հեռավար միանալ մեր համալսարանական կյանքին: Մեր պատմագիտական ուղղություններից մեկում հայ գիտնականներից մեկը հեռավար դասախոսություններ է կարդում, որը մեծ նշանակություն ունի մեր կապերի ակտիվ ամրապնդման մեջ: Նման հարաբերությունները մենք կխորացնենք ու կզարգացենք:

Ավելացնեմ նաեւ մեր ռեկտորի նախաձեռնությունը. մոտ ժամանակներում հավաստագրում է անցնելու հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների ծրագիրը: Այն արդեն պատրաստ է, բավական լրջորեն է մշակվել: Համոզված եմ, որ դա կհանգեցնի գիտագրական հարաբերությունների խորացմանը: Աշխատանքներ են տարվելու մեթոդաբանության ոլորտում եւս, որը կաշխուժացնի կապերը եւ անհրաժեշտ կլինի է՛լ ավելի խորացնել դրանք:Համոզված եմ նաեւ, որ հայկական կողմից նույնպես կցուցաբերվի շահագրգռվածություն ու մեր կապերն առավել խորացնելու եւ ամրապնդելու միտում:

***ՄԱՐԻՆԵ ՋԵՂԵԼԱՇՎԻԼԻ***

*Ախալցիխե*

ՀՈԲԵԼՅԱՆ

# ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

***Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժինը դարձավ 100 տարեկան: Հայագիտության ամբիոնը ԹՊՀ-ում հիմնվել է 1922 թվականին: Մինչ այդ, համալսարանի հիմնադրման օրվանից այս ԲՈՒՀ-ում դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ:***

100-ամյակի կապակցությամբ համալսարանում կազմակերպվել էին կոնֆերանս եւ ցուցահանդես: Ցուցահանդեսում ներկայացված էին հայերեն եւ վրացերեն գրքեր, ձեռագրեր, ցուցանմուշներ:

Հայագիտության ամբիոնի պատմությունը «Ալիք Մեդիայի» հետ զրույցում ներկայացրեց համալսարանի հրավիրված դասախոս, հայագետ Լելա Ջեջելավան:

- Այն, որ համալսարանի հիմնադրումից անմիջապես հետո անհրաժեշտ է եղել ստեղծել հայագիտության ամբիոն, վկայում է, թե որքան են կարեւորել վրաց պատմության հայր ու Վրաստանի առաջին համալսարանի հիմնադիր Իվանե Ջավախիշվիլին եւ նրա թիմը հարեւան երկրի՝ Հայաստանի մշակույթի ու պատմության ուսումնասիրությունը,- ընդգծեց հայագետը:

Ջեջելավայի գնահատմամբ, 100 տարվա ընթացքում հայագիտության ամբիոնն անցել է հարուստ եւ հետաքրքիր գիտական ուղի:

Հայագիտության ասպարեզում գործունեություն ծավալած վրացի հայտնի գիտնականների թվում են Իլիա Աբուլաձեն, Զազա Ալեքսիձեն, Իվանե Շիլակաձեն, Էլենե Դոչանաշվիլին: Վրացի հայագետները այժմ էլ հաջողությամբ աշխատում են տարբեր ոլորտներում՝ լինի գիտահետազոտական ինստիտուտ, թե պետական այլ գերատեսչություն:

Զրուցակցիս ընդգծմամբ, Խորհրդային Միության փլուզումից հետո հայագիտության ամբիոնին հատուկ գործառույթ է տրվել:

- Շատ կարեւոր է, որ հայագիտությունը՝ որպես գիտության մի ճյուղ, չնայած մեր առջեւ ծառացած դժվարություններին, օրինակ՝ ուսանողների սակավաթվությանը, մինչ այսօր պահպանել է իր գոյությունը: Շատ ուրախ եմ, որ վերջին տարիներին մեր հայ երիտասարդները սկսել են հետաքրքրվել հայագիտությամբ եւ հայագիտական կրթություն են ստանում Թբիլիսիի պետական համալսարանում,- ասաց Լելա Ջեջելավան:

Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի հայագիտության բաժնի շրջանավարտներից մեկը՝ Արմինե Պողոսյանը, «Ալիք Մեդիայի» հետ զրույցում խոստովանեց, որ իրեն երջանիկ մարդ է համարում, քանի որ հնարավորություն է ունեցել այդ մասնագիտական ուղղվածությամբ ստանալ բարձրագույն կրթություն.

- Սա շատ կարեւոր ամսաթիվ է մեր ամբիոնի եւ երկու հարեւան երկրների համար: Վրաց-հայկական բազմադարյա բարիդրացիական հարաբերությունները, Վրաստանի վերաբերյալ հայկական աղբյուրներում տեղ գտած պատմական իրադարձությունները, Վրաստանում հայ բնակչության առկայությունը նպաստեցին հայագիտության հետազոտությունների զարգացմանը մի քանի ուղղություններով, որոնք այսօր էլ շարունակում են ուսումնասիրվել:

Ամբիոնում ուսանողները հնարավորություն ունեն ծանոթանալ աշխարհահռչակ հայ, վրացի եւ արտասահմանյան հայագետների ուսումնասիրություններին, նաեւ ուսումնասիրել հնագույն ձեռագրեր, որոնք պահվում են Կոռնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի պահոցներում: Կարծում եմ՝ վերջինս բացառիկ հնարավորություն է հայագիտության ամբիոնի ուսանողների համար, քանի որ ոչ բոլորին է հասանելի նման ձեռագրերի վրա աշխատանքը,- ասում է Արմինե Պողոսյանը:

- Իմ հայագետ դասախոսներն ամենամեծ դերն են խաղացել՝ որպես անհատ, իմ ձեւավորման հարցում: Եթե չլինեին նրանք, գուցե ես այսօր չլինեի այն, ինչ կամ: Լեզվից, պատմությունից, գրականությունից զատ, դասախոսները մեզ սովորեցրին հավասարապես լինել երկու երկրի զավակ, սիրել երկու լեզու, ինտեգրվել վրաց հասարակությանը, մեզ զգալ մեր երկրի լիարժեք քաղաքացիներ,- ընդգծում է Պողոսյանը:




Թե ինչպես որոշեց ընտրել հայագիտությունը, Արմինե Պողոսյանը պարզաբանում է.

- Համալսարան ընդունվել եմ «1+4» ծրագրով՝ չկողմնորոշվելով, թե որ ուղղությամբ պետք է գնամ նախապատրաստական կուրսն ավարտելուց հետո: Ընկերներիցս մեկն ասաց, որ իրեն դասավանդում է վրացի մի դասախոս, որը շատ լավ գիտի հայերեն: Խոսքը դասախոս Նինո Գոքաձեի մասին էր:

Արմինեն անկեղծանում է, որ նախնական փուլում վստահ չէր, անգամ որոշել էր փոխել մասնագիտությունը, ընտրել միջազգային հարաբերությունների բաժինը, բայց ի վերջո ընտրել է հայագիտությունը.

- Սա է իմ սրտի մասնագիտությունը, թեկուզեւ ժամանակակից չէ, թեկուզեւ կարծում են, որ հայերեն իմացողը Վրաստանում նորից հայերեն չպետք է ուսումնասիրի՝ չխորանալով, որ մենք այստեղ միայն հայերեն չենք ուսումնասիրում: Ես պատրաստվում եմ ուսումս շարունակել այստեղ, նպաստել մեր երկրների գիտական, պատմական, հոգեւոր-մշակութային կապերի զարգացմանն ու ամրապնդմանը:

***ՏԱԹԵՎ ԽՈՑԱՆՅԱՆ***
***«ԱԼԻՔ ՄԵԴԻԱ»***

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# Ի՞ՆՉ Է ՏԱԼԻՍ ՍՆՈՒՆԴԸ

*Այն, որ սնունդն անհրաժեշտ է օրգանիզմի կենսունակությունը պահպանելու համար, անվիճելի փաստ է: Սակայն, հետաքրքիր է՝ կոնկրետ սնունդը ի՞նչ է տալիս մարդուն, ինչո՞վ է նպաստում օրգանիզմի կենսունակության պահպանմանը:*



***Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ***

***Բոլնիսիի մունիցիպալիտետ***

Բոլոր կենդանի օրգանիզմներին անհրաժեշտ է սնունդ: Ապրելու համար մարդը պետք է սնվի: Սակայն, ի՞նչ է տալիս սնունդը մարդուն:

Սնունդն անհրաժեշտ է մի շարք պատճառներով: Նախ՝ սնունդը տալիս է էներգիա, որը խիստ անհրաժեշտ է մարմնի բոլոր կենսական գործընթացներին:

Երկրորդ՝ սննդի մեջ պարունակվող նյութերի միջոցով կառուցվում ու վերականգնվում է մարմինը: Դրանցով ստեղծվում են նոր սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, որոնք օգտագործվում են մարմնի աճի, օրգանների ու հյուսվածքների վերականգնման, ծերացած բջիջների փոխարինման գործընթացներում:

Երրորդ՝ սննդի միջոցով ստացվում են այնպիսի նյութեր, որոնք ուրիշ ոչ մի տեղից հնարավոր չէ վերցնել: Դրանցից են վիտամինները, հանքային նյութերը, միկրոտարրերը: Այդ նյութերն օրգանիզմին պետք են չնչին քանակությամբ, սակայն խիստ կարեւոր են եւ անխուսափելի: Որոշ վիտամիններ մարդը կարող է արտադրել իր աղիքներում բնակվող մանրէների միջոցով, սակայն դրա համար եւս սնունդ է անհրաժեշտ:

Բույսերը, ի տարբերություն կենդանիների, իրենց սնունդը ստեղծում են լուսասինթեզի միջոցով՝ արեւի ճառագայթներից, ջրից ու հանքային տարրերից: Սակայն մարդը չի կարող բույսերի նման ստեղծել իր սնունդը, այդ սնունդը պետք է հայթայթել դրսից: Այդ պատճառով էլ հարկ է՝ ուշադրություն դարձնել սննդի որակին, սնվել բազմազան, ավելի շատ օգտագործել թարմ պտուղներ ու բանջարեղեն, որոնք հարուստ են վիտամիններով ու հանքային տարրերով:

Առողջ չափահաս մարդն օրական պետք է սնվի 3-4 անգամ՝ 4-5 ժամ ընդմիջումներով: 4-անգամյա սննդի դեպքում՝ կալորիականությունը պետք է բաշխվի հետեւյալ կերպ. առաջին նախաճաշ՝ 25-30 տոկոս, երկրորդ նախաճաշ՝ 10-15 տոկոս, ճաշ՝ 40-45 տոկոս, ընթրիք՝ 20 տոկոս:

Սնունդը պետք է լավ ծամել: Չծամված սնունդը ծանրացնում է ստամոքսը, մեծացնում լորձի գոյացումը, թուլացնում թթվայնությունը եւ ստամոքսահյութի հատկությունները: Տհաճ խոսակցությունները, ընթերցանությունը եւ այլ շեղող երեւույթներ խանգարում են մարսողական գեղձերի աշխատանքը եւ փակում են ախորժակը: Միշտ պետք է սնվել օրվա նույն ժամին:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

# ԿԵՑՎԱԾՔՆ ՈՒ ԺՊԻՏԸ՝ ԲԱՐՁՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ



***Շատ է գրվել եւ խոսվել մարդու տրամադրության մասին, նշվել են այն գործոնները, որոնք ազդում են դրա վրա: Հետաքրքիր է, արտաքին գործոններից բացի, ի՞նչն է ազդում տրամադրության վրա:***

***Գ.ՍՏԵՓԱՆՅԱՆ***

***Թբիլիսի***

Ներքին ազդակների թվին կարելի է դասել կեցվածքն ու ժպիտը:

Մեր օրերում լավ կեցվածքը հազվադեպ երեւույթ է դարձել: Երկար ժամանակ հեռախոսի մեջ գտնվելը շատ է ազդում ժամանակակից կեցվածքի վրա:

Կեցվածքը ոչ միայն անդրադարձնում է հուզական վիճակը, այլեւ իր հերթին, ազդում է նրա վրա: Փորձեք ուղղվել եւ ուղղաձիգ մեջքով ու հպարտ, բարձրացված գլխով մտաբերել որեւէ տհաճ, թախծալի կամ տխուր դեպք: Այնքան էլ հեշտ չէ դա անել: Իսկ եթե հաջողվի, անմիջապես ձեր կեցվածքն էլ կփոխվի, կդառնա կորացած, ուսերի մեջ կծկված:

Ինչ վերաբերում է ժպիտին, երբ այն զարդարում է դեմքը, մարմնի յուրաքանչյուր բջիջ թարմանում ու վերածնունդ է ապրում:

Դիմախաղային մկանները ժպիտի ժամանակ ոչ միայն շարժում են դեմքի մաշկը, այլեւ ազդանշաններ են ուղարկում ուղեղի հատուկ բաժիններին, որոնք կոչվում են հաճույքի կենտրոններ:

Ժպիտը դրական ազդեցություն ունի մեր օրգանիզմի հորմոնալ վիճակի վրա: Ժպիտի ժամանակ բարձրանում է էնդորֆինների քանակը, որն ուղղակիորեն ազդում է օրգանիզմում սթրեսային հորմոնների վրա՝ նվազեցնելով վերջինների քանակը:

Այնպես որ, ուղիղ կեցվածքն ու ժպիտը առողջության գրավականն են թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

# ԾՈՎՈՎ ՊՍԱԿՎԱԾՆԵՐԸ

**Այվազովսկու կյանքում երկու կիրք կար. գեղանկարչությունն ու Աննա Սարկիսովան**

**(Սկիզբը՝ 85-86 համարում)**

Բայց մի քանի տարի անց, ամուսնությունը փաստացիորեն ավարտվեց: Կինը սկսեց ձանձրանալ գավառական Թեոդոսիայում եւ մենակ մեկնել կամ Սանկտ Պետերբուրգ, կամ Օդեսա: Այնտեղ նա վայելում էր ազատ կյանքը, եւ իրեն զգում՝ ինչպես ձուկը ջրում:

1860 թվականի աշնանը կնոջ անարգել վայելքները վերածվեցին լուրջ հիվանդության: Գերմանիայում բուժվելուց հետո, Յուլիա Գրեւսը հեռացավ ամուսնուց, դուստրերի հետ մեկնեց Օդեսա եւ այլեւս չվերադարձավ Թեոդոսիա: Երեխաների հետ բաժանումը ծանր տանելով՝ Այվազովսկին բազմաթիվ անգամներ փորձեց կապվել կնոջ հետ, բայց ամեն ինչ ապարդյուն էր: Նրանից պահանջվում էր միայն գումար բարեկեցիկ կյանք վարելու համար:

**ՍԳՈ ԺԱՄԻՆ**

Անցան տարիներ: 1881 թվականին Թեոդոսիայի ավաններից մեկում, արդեն հասակն առած նկարչի կառքը կանգնեցրեց, փակեց սգո թափորը: Հուղարկավորում էին թեոդոսիացի վաճառականի: Դագաղի հետեւից եկող ազգականները պատկառանքով բարեւում էին Իվան Կոնստանտինովիչին: Թափորի մեջ Այվազովսկին որսաց երիտասարդ մի կնոջ հայացք՝ սգո զգեստով: Տեսավ ու կորցրեց գլուխը:

Այվազովսկին բարձրահասակ չէր, բայց շատ ամուր կազմվածք ուներ: Դեմքին աշխուժություն էին հաղորդում ոչ մեծ, շագանակագույն ու խորաթափանց աչքերը: Աչքի էր ընկնում նրա ուռուցիկ ճակատը՝ կնճիռներով պատված: Ահա այդպիսին էր Այվազովսկին, երբ սիրուց կորցրեց գլուխը: Տարիներից չընկճված ծերունին ամեն դեպքում փեսացուի լավագույն տարբերակ չէր:

Այվազովսկին տեղեկություն հավաքեց երիտասարդ կնոջ մասին: Պարզվեց, որ Աննա Մկրտիչովնա (Նիկիտիչնա) Սարկիսովան, օրիորդական ազգանունը՝ Բուռնազյան, այրի էր: Նա ծնվել էր 1856 թվականին, Թեոդոսիայում, հայկական ընտանիքում: Աղջիկը շատ գեղեցիկ էր, եւ զարմանալի չէր, որ նրան շուտ էին ամուսնացրել: Հանդիպման այդ օրը նա հուղարկավորում էր ամուսնուն՝ վաճառական Սարկիսովին, որի մահից հետո ժառանգել էր մեծ տարածք՝ հսկայական այգով: Երեխաներ չուներ: Աննա Նիկիտիչնան շատ հանգիստ կարող էր Այվազովսկու թոռնուհին լինել: Նրանց բաժանում էր մի ողջ 40 տարի: Բայց նկարիչը հաստատակամորեն որոշեց ամուսնանալ: Անհնար էր պատկերացնել, որ որեւէ մեկը կարող էր նրան մերժել:

Թեոդոսիայում Այվազովսկին ե՛ւ թագավոր էր, ե՛ւ Աստված: Նրա հյուրասենյակում ձեւավորվում էր հասարակական կարծիքը, քննարկվում էին քաղաքային բոլոր հարցերը: Նրանից էին սկսում իրենց հանդիսավոր այցերը պաշտոնյաներն ու հայտնիները: Այս պատիվը Այվազովսկին վաստակել էր ոչ իբրեւ նկարիչ: Այստեղ գլխավոր դերն այն էր, որ Այվազովսկին պարզապես հեղինակություն էր՝ որպես մարդ: Ոչ ոք նրան մերժելու իրավունք չուներ: Եվ այդուհանդերձ, Այվազովսկին շատ էր վախենում երիտասարդ այրու մերժումից: Վախը փարատվեց, երբ Աննան առանց երկմտելու ընդունեց Այվազովսկու առաջարկը:

Հովհաննեսը սիրահարվեց այնքան կայծակնորեն, որ, չսպասելով ամուսնալուծությանը, սկսեց հարսանեկան հրավերներ բաժանել: Մինչդեռ, երկկնության համար խախտելով օրենքը, նա հնարավոր է՝ զրկվեր բոլոր իրավունքներից, ունեցվածքից ու նույնիսկ աքսորվեր Սիբիր:

**ՓՇՈՏ ՃԱՆԱՊԱՐՀ**

Ամուսնալուծությունը ձգձգվում էր, որովհետեւ ամուսինները տարբեր դավանանքների էին եւ պետք է ստանային երկու եկեղեցիների համաձայնությունը: Հայկական եկեղեցին չի ճանաչում ամուսնալուծություններ, բայց կան բացառություններ: Իսկ Յուլյա Գրեւսը՝ լյութերանական էր: Նրա եկեղեցին ամուսնալուծությունը չէր ճանաչում, եւ Յուլյա Յակովլեւնան ուներ բոլոր իրավունքները Այվազովսկուն բազմակնության մեջ մեղադրելու համար: Առանց զլանալու նա այդ մասին անընդհատ դիմում էր տարբեր ատյաններ: Այվազովսկու անձնական ողբերգությանը գումարվեց նաեւ դուստրերից հայկականը բացառելու կնոջ անհագ ցանկությունն ու նպատակը: Յուլյա Գրեւսը բոլոր դուստրերին կնության տվեց այլազգիների:

Նկարիչն ու իր ընտրյալն ամուսնացան 1882 թվականի հունվարի 30-ին: Աննան նորից ամուսնացավ՝ չսպասելով սգո ավարտին: Այվազովսկին ամուսնացավ՝ չսպասելով ամուսնալուծությանը: Երկուսն էլ կարգավորվող հարցեր էին, բայց ոչ տարիքը... Ժամանակը ոսկու կշիռ ուներ: Այվազովսկուն ժառանգորդ էր հարկավոր:

Աննան երեք հատկություն ուներ, որոնք տարբերում էին նրան առաջին կնոջից: Հայ էր, նույն եկեղեցու հետեւորդ էր, ինչ Այվազովսկին, եւ երրորդը՝ Աննայի համար աշխարհի կենտրոնն իր ամուսինն էր:

Նկարչի տանն այլեւս բնակվեցին ջերմությունն ու լույսը: Հայրական տուն վերադարձավ դուստրը՝ Ալեքսանդրան, տղաների հետ:

Ամուսնու մահից հետո, Աննան ապրեց եւս 44 տարի: Նա 25 տարի միայնակ ու մեկուսի ապրեց այն տանը, ուր այդքան երջանիկ էր Այվազովսկու կողքին: Այդտեղ վերապրեց Առաջին համաշխարհային պատերազմը, Քաղաքացիական պատերազմը, սովը, ավերածությունները: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, քաղաքի բնակչությունն արտահանվեց, Աննայի մասին կա՛մ չգիտեին, կա՛մ չէին հիշում: Նրան իր մոտ՝ Սիմֆերոպոլ տարավ նկարիչ Նիկոլայ Սամոկիշը:

Աննան կյանքից հեռացավ 1944 թվականին...

«Ծովի արքային» Աննան այդպես էլ չնվիրեց որդի, որի մասին այդքան երազում էր Այվազովսկին, փոխարենը՝ նվիրեց անմնացորդ ու անձնուրաց ՍԵՐ:

**Պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ**

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Պապը հիշում է հին ու բարի ժամանակները.*

*- Երբ ես փոքր էի, մայրս կարող էր ինձ խանութ ուղարկել 50 կոպեկով, եւ ես տուն էի վերադառնում 5 կգ կարտոֆիլով, երկու հատ մատնաքաշով, երեք շիշ կաթով, կես կգ պանրով, մեկ տուփ թեյով ու մեկ կգ շաքարավազով: Իսկ հիմա հնարավոր չէ. չափից շատ են հսկող տեսախցիկները:*

*☺ Կինը՝ ամուսնուն.*

*- Սիրելիս, երեկ ինձ այնքան հաճոյախոսություն արեցիր: Նման բան քեզնից ես կյանքում չէի լսել:*

*- Կներես, հարբած էի:*

*☺ Փեսան մտնում է տուն, տեսնում զոքանչին՝ ավելը ձեռքին, ասում է.*

*- Այտա, էդ թռնը՞մ ես, թե՞ արդեն պասադկա ես արել:*

*☺ Մեկը հարբած, հալից ընկած, մտնում է ավտոբուս: Աջ շարքում նստածներին ասում է՝ դուք սաղ դեբիլ եք, ձախ կողմը նստածներին էլ՝ սաղ անբարոյական եք....*

*Ձախ շարքից մի տիկին հուզված.*

*- Ի՞նչ ես դուրս տալիս, ա՛յ ալկաշ, ես բարոյական կին եմ, երբեք չեմ դավաճանել իմ ամուսնուն....*

*- Լավ, լավ, էլ խի ես ձենդ գլուխդ գցըմ, վեր կաց՝ գնա աջ շարքըմը նստի.....*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Հայրենիքի համար արված է ոչ բավականաչափ, եթե ամեն ինչ չի արված:

***Մ. ՌՈԲԵՍՊԻԵՐ***

Լավ միտքը, որտեղից էլ այն վերցված լինի, անհամեմատ ավելի լավ է, քան սեփական հիմար միտքը. սա թող վիրավորանք չլինի նրանց, ովքեր ամեն ինչ փնտրում են իրենք իրենց մեջ՝ չդիմելով ոչ ոքի:

***Ֆ. ԼԱՄՈՏ ԼԸ ՎԱՅԵ***

Կարճ մտքերը նրանով են լավ, որ լուրջ ընթերցողին ստիպում են ինքնուրույն մտածել:

***Լ. ՏՈԼՍՏՈՅ***

Ընտանիքս մեծ է. ունեմ երեք երեխա՝ երկուսը ինձանից, մեկը՝ սկեսուրիցս:

***Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ***

***«Վրաստանի» ընթերցող***

***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 6-ից ստանձնում է «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցության Վարչության նախագահի պաշտոնը:*

«Այսօրվանից ստանձնում եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության նախագահի պաշտոնը: Մեծ պատիվ է ու մեծ պատասխանատվություն: Շնորհակալ եմ ՔՊ 6-րդ համաժողովի բոլոր պատվիրակներին, նորընտիր Վարչության բոլոր անդամներին»,- Թվիթերի» իր միկրոբլոգում նշել է Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄԱԿ-Ի՝ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ 27-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

*Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը մասնակցեց եւ ելույթ ունեցավ Եգիպտոսի Շարմ էլ Շեյխում ընթացող ՄԱԿ-ի՝ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 27-րդ համաժողովին:*



Իր խոսքում Հայաստանի նախագահը նշեց, որ կլիմայի փոփոխության դեմ պայքարը համաշխարհային օրակարգի կարեւոր բաղկացուցիչն է, որը պահանջում է բոլորի համատեղ հանձնառությունը:

Վահագն Խաչատուրյանն ընդգծեց, որ, չնայած Հայաստանում առկա մարտահրավերների ու անվտանգության խնդիրների, կլիմայի փոփոխության օրակարգը շարունակում է առաջնային տեղ զբաղեցնել Կառավարության ձեւավորած օրակարգում:

- Որպես առաջնահերթություն է ճանաչվել կլիմայապես դիմացկուն եւ ցածր ածխածնային զարգացումը, որը հիմնված է կայուն ու երկարաժամկետ կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարության, լայնածավալ անտառապատման, վերականգնվող էներգիայի եւ էներգաարդյունավետության ոլորտներում ներդրումների, նորարարական ու ժամանակակից կլիմայական տեխնոլոգիաների կիրառման, էլեկտրական շարժունակության խթանման եւ միջուկային էներգիայի զարգացման վրա,- ասաց նախագահը:

## ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ 74 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




*Երեւանում մեկնարկել է «Այլընտրանքային ներդրումները Հայաստանում» երկօրյա միջազգային համաժողովը, որին մասնակցում է ավելի քան 150 ներկայացուցիչ Հայաստանից, Միացյալ Նահանգներից, Միացյալ Թագավորությունից, Կուրասաոյից:*

Համաժողովի հիմնական նպատակն է Հայաստանում այլընտրանքային ներդրումների աղբյուրների աճի հնարավորությունների ստեղծումը:

Համաժողովը մեկ ընդհանուր հարթակում է հավաքել ներդրողների, վենչուրային ընկերությունների, ընտանեկան գրասենյակների, ֆինանսական կառույցների, մասնավոր ընկերությունների, կառավարությունների, դեսպանատների ներկայացուցիչների:

Նշվել է, որ Հայաստանի ֆինանսական շուկան այսօր բաղկացած է մոտ 10,3 մլրդ ԱՄՆ դոլարի վարկային ներդրումներից, 3,6 միլիարդ դոլարի պետական պարտատոմսերից, 1,1 միլիարդ դոլարի կորպորատիվ պարտատոմսերից, 670 միլիոն դոլարի թողարկված բաժնետոմսերից, իսկ մասնավոր կապիտալի ֆոնդերի կողմից տնտեսության մեջ տեղաբաշխված միջոցները 200 միլիոն դոլարից պակաս են:

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, կարեւորելով համաժողովը, նշեց, որ նախարարությունն ու կառավարությունը նպատակ ունեն զարգացնել տնտեսության ֆինանսավորման այլընտրանքային շերտերը: Նրա խոսքով, Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ կատարած համատեղ հետազոտությունների արդյունքը ցույց է տվել, որ սփյուռքահայերի 74 տոկոսը պատրաստ է Հայաստանում ներդրումներ անել: Մարդիկ դիտարկում են նաեւ մասնավոր ներդրումային հնարավորություններ:

Ինչպես հայտարարեց Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, Սփյուռքի մի շարք գործարարներ, ընկերություններ Հայաստանում ներդրումներ անելու ցանկություն ունեն:

- Այդ ընկերությունների մոտ Հայաստանի ապագայի նկատմամբ բարձր վստահության մակարդակ կա, այլապես ընկերությունները ներդրում չեն անի մի տեղ, որի ապագային չեն հավատում,- ասաց Զարեհ Սինանյանը:

Միջոցառումը կազմակերպվել է Orior Worldwide Innovations-ի եւ BDO Armenia-ի համագործակցությամբ:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՍՏԵՂԾՎԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱ

*Հայաստանում նախատեսվում է Ոստիկանության զորքերի, պետական պահպանության գլխավոր վարչության եւ ճանապարհային ոստիկանության ուղեկցող ստորաբաժանման հենքի վրա ձեւավորել Ոստիկանության գվարդիա:*

Այդ մասին ասվեց Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում, 2023թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ: Նշվեց նաեւ, որ ներքին գործերի նախարարության ձեւավորումից հետո իրականացվելու է Ոստիկանության կառուցվածքի եւ գործառույթների արմատական փոփոխություններ ու վերաիմաստավորում:

Ոստիկանության գվարդիային կվերապահվեն հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգության ապահովումը, պետական պահպանությանը ենթակա պետական մարմինների եւ կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաեւ կարեւորագույն նշանակության օբյեկտների անվտանգության ապահովումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ պետական արարողակարգով նախատեսված օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների ուղեկցումը, հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը եւ այլն:

## ՎԵՐՋԻՆ 4 ՏԱՐԻ 4 ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ 143 ՀԱԶԱՐ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ

*Հայաստանի կառավարությունը վերջին 4 տարի 4 ամսվա ընթացքում 143 հազար նոր աշխատատեղ է ստեղծել:*

Այս մասին Ազգային ժողովում 2023 թվականի պետբյուջեի քննարկմանը հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

- Արդեն առիթ եմ ունեցել ասելու, որ Հայաստանում գրանցված աշխատատեղերի ռեկորդ ունենք հոկտեմբեր ամսվա տվյալներով: Հայաստանում գոյություն ունի 691 հազար գրանցված եւ վճարվող աշխատատեղ: Խոսքն այն աշխատատեղերի մասին է, որտեղ գիտենք, որ կոնկրետ անուն-ազգանունով մարդիկ աշխատում են, աշխատավարձ ստանում եւ վճարում եկամտային հարկեր: Եթե այս ցուցանիշը մենք արձանագրենք, պետք է ասենք, որ, 2018 թվականի մայիսի համեմատ, 2022 թվականի հոկտեմբերին աշխատատեղերի թիվն ավելի է 143 հազարով, իսկ 2018 թվականի սեպտեմբերի համեմատ, աշխատատեղերի թիվը 108 հազարով ավելի է,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

### ԼԱՐՍՈՒՄ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԿԱՐՈՂ Է ՄՐՎԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՃԱՌՈՎ

***Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն ընդգծել, որ եղանակային պայմանների վատթարացմանը զուգընթաց, Վերին Լարսի անցակետում թողունակության խնդիրն ավելի կսրվի:***

***- Դժվարությունները կապված են նրա հետ, որ հայտնի դեպքերի պատճառով Ռուսաստանի համապատասխան ծառայությունները ստիպված են մեքենաները ստուգման ենթարկել շատ ավելի մանրակրկիտ եւ շատ ավելի երկար, ինչի հետեւանքով հերթեր են գոյանում, այսինքն՝ թողունակությունը պակասում է,- ասաց նախարարը՝ հավելելով, որ հայկական կողմը ռուս եւ վրացի գործընկերների հետ ամենօրյա կապի մեջ է:***

***- Լարսում կարծես թողունակության բարձրացման նոր հնարավորություններ կան նոր կետեր ավելացնելու հաշվին: Այս պահին փորձում ենք դա կարգավորել,- հավելեց Սանոսյանը:***

### 155 ՀԱԶԱՐ ԱՅՑԵԼՈՒ՝ ՄԵԿ ԱՄՍՈՒՄ

***2022 թվականի հոկտեմբերին դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 154 847:***

***Ընթացիկ տարվա առաջին 10 ամսվա ընթացքում Հայաստան եկած զբոսաշրջիկների թիվը կազմել է 1 400 000:***

***2022 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում դեպի Հայաստան զբոսաշրջային այցելությունների աճ գրանցած հինգ երկրներն են Ռուսաստանը (շուրջ 46 տոկոս), Վրաստանը (8 տոկոս, Իրանը (7 տոկոս), ԱՄՆ-ը (4 տոկոս) եւ Գերմանիան (2 տոկոս):***

***Այս տարվա այցելուների 49 տոկոսը 36-63 տարեկան զբոսաշրջիկներ են եղել, իսկ հոկտեմբեր ամսին Հայաստան այցելել են մեծամասամբ տղամարդիկ:***

### ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՆՈՒՄ ԵՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

***2022-ի երրորդ եռամսյակում՝ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, օտարերկրյա քաղաքացիները Հայաստանում 522 միավոր անշարժ գույք են ձեռք բերել, 740-ը՝ վաճառել: Կադաստրի կոմիտեի հրապարակած տվյալներով, սա առուքվաճառքի ընդհանուր գործարքների 9,5 տոկոսն է կազմում: 466 գործարքի դեպքում օտարերկրյա քաղաքացիները միայն գնորդներ են եղել, 684-ի դեպքում՝ վաճառող, իսկ 56 առքուվաճառքի գործարքի դեպքում՝ երկու կողմն էլ օտարերկյա քաղաքացիներ են եղել: Անշարժ գույք ձեռք բերած եւ վաճառած օտարերկրյա քաղաքացիները հիմնականում եղել են ՌԴ, ԱՄՆ, ԻԻՀ, Սիրիայի, ԱՊՀ եւ եվրոպական պետությունների քաղաքացիներ:***

### ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԻՋԵԼ Է

***Այս տարի, նախորդ տարվա համեմատ, Սեւանի մակարդակը 13 սմ-ով ցածր է:***

***Հայաստանի շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի տեղեկատվությամբ, կանխատեսումներն ի սկզբանե ավելի վատ էին, բայց գարնանային տեղումները դրական ազդեցին Սեւանի վրա:***

***Նա նշեց, որ այս տարի Սեւանում սիգի քանակն ավելացել է, եւ այդ իսկ պատճառով երկրորդ քվոտան է տրամադրվել օրինական որսի համար:***

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԴՐԱՄԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

***Կենտրոնական բանկի հրապարակած տվյալներով, այս տարվա հոկտեմբերի դրությամբ Հայաստանի միջազգային պահուստները կազմում են 3 միլիարդ 633 մլն ԱՄՆ դոլար, որից 3 միլիարդ 614 միլիոն ԱՄՆ դոլարն արտարժույթով է: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանի միջազգային պահուստներն աճել են 432 մլն ԱՄՆ դոլարով կամ 13,5%-ով:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՆՈՅԵՄԲԵՐ

*19.11.2022 Տոն բոլոր սրբերի՝ հների եւ նորերի, հայտնիների ու անհայտների*

Հայ եկեղեցին այս տոնով նշում է բոլոր այն սրբերի հիշատակը, որոնց անունները չեն անցել Տոնացույցի կամ եկեղեցական օրացույցի մեջ, սակայն նրանց սուրբ անունները գրված են Երկնքի արքայության սրբազան մատյանում:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

## ԲԱԹՈՒՄԻԻ «ԱՃԱՐԱԲԵԹ ԱՐԵՆԱ» ՄԱՐԶԱԴԱՇՏԸ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՍԿԱՐԻ ԴԱՓՆԵԿԻՐ



Առաջին ազգային մրցանակաբաշխությանը, Բաթումիի «Աճարաբեթ Արենա» ֆուտբոլի խաղադաշտը հաղթեց «Լավագույն հանրային շինություն» անվանակարգում: Հատուկ ժյուրիի կողմից շնորհված այդ հաղթանակից հետո, խաղադաշտը ներկայացվել է համաշխարհային FLABCI World Prix d’ Excellence Awards մրցանակաբաշխությանը, որը կանցկացվի 2023 թվականին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ՀՈԲԵԼՅԱՆ

## «ՄԵՐ ՀԱՅԱՍԱՆ ԴԵՌ ՇԱՏ ԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ...»



***Բանաստեղծական յոթ գրքերով հայտնի բանաստեղծ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության եւ Հայաստանի գրողների միության անդամ Գեւորգ Հայյասան 75 տարեկան է...***

Ծնվել է Ախալքալաքի շրջանի Մերենիա գյուղում, ուսանել Երեւանի պետական համալսարանին առընթեր ակադեմիկ Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ թեքումով դպրոցում, միաժամանակ, սովորել եւ ավարտել է արվեստի պատանեական համալսարանը:

Ունի բանասիրական բարձրագույն կրթություն: Վերակառուցել, նկարել-ձեւավորել է Ջավախեթիի մի շարք գյուղերի եկեղեցիներ: Զբաղվել է նաեւ մանկավարժությամբ, «Հայոց լեզու եւ գրականություն» է դասավանդել Մերենիայի հանրային դպրոցում: Պարգեւատրվել է Հայաստանի «Մայրենիի դեսպան» մեդալով, արժանացել Համաշխարհային հայկական կոնգրեսի մրցանակի:

Պատկառելի մարդ, գրող-հրապարակախոս ու նկարիչ Գեւորգ Հայյասան դեռ շատ ասելիքներ ունի աշխարհին...

Իր ապրած կյանքով ու ստեղծագործություններով, Գեւորգ Հայյասան եւս մեկ անգամ հաստատում է բազմիցս ապացուցված ճշմարտությունը. «Բանաստեղծներն իմաստնանում են, բայց չեն ծերանում»:

Նոր անդաստաններ՝ քո գրչին, նոր հորիզոններ՝ քո թռիչքին, նոր զորություն՝ քո հավատքին, բանաստեղծ...

***Գրչակից ընկերների անունից՝ ԱԼԲԵՐՏ ԻՍՈՅԱՆ, ՍԻԼՎԱ ՍԻՓՍԱՆՈՒՅԻ, ԵՎԱ ՉԻՎՉՅԱՆ***

**«Վրաստան» թերթը միանում է Գեւորգ Հայյասայի ծննդյան 75-ամյակին նվիրված շնորհավորանքներին, մաղթում նրան քաջառողջություն, երկարակեցություն, նորանոր հաջողություններ ու բեղուն գրիչ:**

ԿՈՐՈՒՍՏ

## Ի ՀԻՇԱՏԱԿ՝ ԴԻՄԻՏՐԻ ՉԻՏԼՈՎԻ



Նույնիսկ 85 տարեկանում Դիմիտրի Սամսոնի Չիտլովը նման չէր այն մարդուն, ում որեւէ հիվանդություն կարող էր ծնկի բերել: Բարեկազմ էր, ձգված, աշխույժ հայացքով ու մարզական քայլվածքով... Միայն մեկ տարի առաջ սկսեց գանգատվել հոդերի եւ ոտքի ցավերից: Սակայն կյանքի 88-րդ տարում նրան սպանեց մեկ այլ անգութ ու դաժան հիվանդություն:

Դիմիտրի Չիտլովը ծնվել է Ծալկայի շրջանի Ախալիկ գյուղում: Հպարտությամբ էր հիշում, որ ինքը, ինչպես նաեւ եղբայրը՝ Ֆոտին, քույրերը՝ Լարիսան եւ ներկայումս երջանկահիշատակ Վեներան, իրենց արժանիքներով շատ բանով պարտական են ծնողներին՝ Սամսոն եւ Ֆոտինիի Չիտլովներին, Ախալիկի սովորական գյուղացիներին:

Հարազատ գյուղում միջնակարգն ավարտելուց հետո, Դիմիտրի Չիտլովը ուսումը շարունակեց Սարատովի իրավաբանական ինստիտուտում: Բուհն ավարտելուց հետո, վերադարձավ հարազատ շրջան: Որպես քննիչ՝ սկսեց աշխատել Ծալկայի շրջանային դատախազությունում, ապա դարձավ շրջանի դատախազ, Վրաստանի գլխավոր դատախազի տեղակալ:

Արգասաբեր էր նաեւ Դիմիտրի Չիտլովի գործունեությունը Վրաստանի խորհրդարանում (1992-1995), ուր զբաղեցնում էր օրինականության եւ արդարադատության ենթահանձնաժողովի ղեկավարի պաշտոնը:

Դիմիտրի Չիտլովը սերտորեն կապված էր վիրահայերի, մասնավորապես՝ Ծալկայի հայերի հետ: Սերտ բարեկամությունը պայմանավորված էր նաեւ նրանով, որ կնոջ Ջուլիետա Գուրգենիի եւ նրա ընտանիքը հայ ու հույն հինավուրց ժողովուրդների սովորությունների եւ ավանդույթների յուրատեսակ սափոր էր: Հենց այդ ոգով էլ ամուսինները դաստիարակեցին իրենց զավակներին՝ որդուն՝ Ֆելիքսին, Ռադա եւ Էլինա դուստրերին:

***«Վրաստան» թերթը իր վշտակցությունն է հայտնում Ջուլիետա Գուրգենի Չիտլովային, ամուսնու՝ Դիմիտրի Սամսոնի Չիտլովի մահվան կապակցությամբ եւ ցավակցում հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:***



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ե՛վ Հրաչյան, ե՛ւ Բաբկենը: 5.Հովհ.Թումանյանի գրական հերոս իշխան: 8.Փոքր գետակ: 9.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված մեծ վիպասանը: 10.Երաժշտական տերմին: 11.Կիսագրագետ, լրիվ կրթություն չստացած: 12.Հայ գեղեցիկ արքա: 13.Թերթի վաճառքի կետ: 16.Ուրիշ, տարբեր: 18.Ռուս աճպարար: 19.Առանց լացի: 21.Արցախցի ժողովրդական երգիչ: 22.Արշավորդի ժամանակավոր բնակարան: 24.Իտալացի ճանապարհորդ, գրող ... Պոլո: 25.Տքնանք, չարչարանք: 28.Խորվաթիայի խոշորագույն քաղաքը: 30.Ֆրիկի բանաստեղծություններից: 35.Ընծայել, նվեր տալ: 37.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 38.«...ս վիճակը ծանրացավ սրտիս» (Մ.Նալբանդյան): 39.Ե՛վ գեղեցիկ ծաղիկ, ե՛ւ աղջկա անուն: 41.Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: 43.Կենդանու դիակ: 44.Հնդիկ առաջնորդ Ջավահառլար ...: 45.Անարմատ բույս: 48.Հումորիստ Սայաթ Հարությունյանի կեղծանունը «Մոտորիստ ...»: 50.Հայտնի էլեկտրոնիկայի խանութ Սլովակիայում: 52.Խրճիթի լուսամուտ: 54.Վրացու անուն: 55.Հայտնի տորթերի խանութ Երեւանում «... Դեսերտ»: 57.Երաժշտական լարային գործիք: 58.Կիլիկիայի մայրաքաղաքը: 59.Գյուղ Հայաստանի Շիրակի մարզում: 60.Աֆրիկյան լիճ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Սրբադասված բանաստեղծ: 2.Բուլղարիայի կարեւոր քաղաքը: 3.Քաղաք Ղրիմում: 4.Իսպանացի հանրահայտ թենիսիստ: 5.Կրկնող թռչուն: 6.Թբիլիսահայ գրող: 7.Լույսից ծնված: 14.Չեխիայի քաղաքամայրը: 15.Հայկական ժողովրդական երգ: 17.Հենրիկ Սենկեւիչի երկը «... երթաս»: 19.Բնաձայն բառ: 20.Գետ Վրաստանում: 21.Հերոսուհի «Կտոր մը երկինք» ֆիլմում: 22.Սպառնալիք, չարիք: 23.«Մայրիկ» ֆիլմի ռեժիսոր ... Վեռնոյ: 26.Աստվածաշնչյան առաջին զոհը: 27.Հովսեփ Վարդանյանի հայատառ, թուրքերեն գրված վեպը: 29.Վրացական գինիներից: 31.Վառ կարմիր: 32.Ոչ տարբեր: 33.Լեռնահայաստանի «արծիվը» (անունը): 34.Խոնավ, թաց: 36.Ե՛վ լեռ, ե՛ւ գետ Հայաստանում: 40.Սպորտային պարբերական Թբիլիսիում: 42.Մակերեսի չափման միավոր: 45.Րաֆֆու վեպերից: 46.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոս: 47.Կիլոկալորիան կրճատ: 49.Ջավակ, ուստր: 51.Ագի, վերջավորություն: 53.Աշակերտի 45 րոպեն: 56.Ներկա է, գոյություն ունի:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Օգոստոս: 9.Եղունգ: 10.Շենք: 11.Ջավահիր: 13.Սատար: 16.Վառ: 17.Կոն: 19.Մեշոկ: 22.Ցաքատ: 24.Վեներա: 25.Վագր: 27.Ֆերարի: 29.Հաստատ: 32.Նաիրա: 33.Հավասի: 35.Կտակ: 38.Մեկ: 40.Բրունո: 41.Կալա: 44.Նամ: 45.Քաջք: 48.Նեղ: 50.Դիանա: 51.Աղիք: 54.Մանր: 55.Սան: 56.Տոտո: 58.Տիպ: 59.Դարչին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ագռավ: 2.Աստառ: 3.Կոշիկ: 4.Կեքս: 5.Կուրտ: 6.Իգոր: 8.Սերոբ: 12.Վարք: 14.Ամեն: 15.Արոր: 18.Օտար: 19.Մեթան: 20.Շերտ: 21.Կարտ: 23.Ավանակ: 26.Գինի: 28.Երամ: 29.Հին: 30.Սակր: 31.Անանակ: 34.Վերջին: 36.Տուն: 37.Կոմ: 39.Վլե: 42.Անամպ: 43.Աղանդ: 46.Աղաք: 47.Քարտ: 49.Լիտր: 52.Քոչ: 53.Հոն: 57.Տի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445